+

ՀՀՏԱՐԱԾՔԱՅԻՆԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևան, Կառավարական տուն 3

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ /ՕՊԵՐԱՏՈՐ/

3.1-26
(ծածկագիրը)

ա) կատարում է վարչական ղեկավարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.

բ) ապահովում է բնակիչների կողմից ստացված դիմումների, բողոքների և տարաբնույթ փաստաթղթերի ընդունումը և աշխատանքներ է իրականացնում դրանց ընթացքի ուղղությամբ:

գ/ կազմակերպում է ֆիզիկական և իրավաբանական անձանց հարկերի հաշվառման և հավաքագրման գործընթացը

դ/ անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում, նախապատրաստում, վարչական ղեկավարին և աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր

ե/ հարկեր չվճարած անձանց մասին տեղեկատվություն է ներկայացնում վարչական ղեկավարին

զ/ օժանդակում է քաղաքացիների հետ կնքվող գյուղ. նշանակության հողերի վարձակալական պայմանագրերի կնքման աշխատանքներին

է/նախապատրաստում է սեփականության իրավունքի վկայականներում տեղ գտած անճշտությունների ուղղման հետ կապված համապատասխան փաստաթղթերը

է/ մասնակցում է համայնքի անասնագլխաքանակի հաշվառման աշխատանքներին

ը/ նախապատրաստում է քաղաքաշինության ոլորտի հասցեների տրամադրման որոշումների նախագծերը

պատրաստում և վարչական ղեկավարի վավերացմանն է ներկայացնում համապատասխան տեղեկանքներ և փաստաթղթեր

թ/ մասնակցում է քաղաքացիների դիմում-բողոքների և նրանց կողմից բարձրացված տարաբնույթ քննարկումներին

ժ/ իրականացնում է վարչական ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի կողմից տրված այլ հանձնարարականներ

ժա/իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով չսահմանված, օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ :

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) ունի առնվազն միջնակարգ կրթություն.

բ) ունի «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնների առաջացման հիմքերիի վերացման ժամկետն է՝ մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնները մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցների (մասնակիցներիցմեկի) կողմից զբաղեցնելը

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2024 թվականի դեկտեմբերի 2-ը ժամը 10:00:

Խնդրում ենք դիմումներն ուղարկել միայն էլեկտրոնային տարբերակով՝ e-request.am էլեկտրոնային հասցեին:

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարողեն դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ (ք. Երևան, Կառավարական տուն N 3, հեռ. 010-515131):

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
աշխատակազմ